ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/16063-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-739-05.12.2023,08.04.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի վերնագրի հիշատակումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված իրավադրույթում ամրագրված հաջորդականությանը, որի համաձայն. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:

2. Հստակեցնելու համար, որ նախագծով առաջարկվող կարգավորումները կիրառելի են միայն 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ձևավորվող շահույթից բաշխվող շահաբաժիններից վճարված եկամտային հարկի փոխհատուցման դիմումների մասով՝

առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցում չի կատարվում, եթե շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ձևավորվող շահույթից բաշխվող շահաբաժիններից վճարված եկամտային հարկի փոխհատուցման դիմումները հարկային մարմին ներկայացնելու օրը ներառող հարկային տարվա և (կամ) նախորդ հարկային տարվա ընթացքում ունեցել է անբողոքարկելի դարձած ստուգման կամ այլ վարչական ակտով արձանագրված՝

1) Օրենսգրքի 408-րդ կամ 410-րդ կամ 415-րդ հոդվածների պահանջներից որևէ մեկով խախտում,

2) Օրենսգրքի 412-րդ հոդվածի պահանջների երկու և ավելի անգամ խախտում,

3) Օրենսգրքի 416-րդ հոդվածի պահանջների երեք և ավելի անգամ խախտում:»:

Առաջարկությունը պայմանավորված է ծանրության տարբեր աստիճանի իրավախախտումների դեպքերում տարբերակված մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, առանց լիցենզավորման գործունեություն իրականացնելու խախտում իրականացնելու և ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտումներ իրականացնելու դեպքերում տարբերակված մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությամբ, քանի որ առաջին դեպքում ծանրության աստիճանն ավելի մեծ է:

3. Հստակեցնելու համար, որ նախագծով առաջարկվող սահմանափակումների կիրառության առումով հաշվի են առնվում միայն նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված խախտումները՝ առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 2.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքով սահմանված սահմանափակումների կիրառության առումով հաշվի են առնվում միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված՝ սույն օրենքով սահմանված իրավախախտումները:»:

Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախագծով առաջարկվող սահմանափակումը կիրառվի նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո կատարված

իրավախախտումների դեպքում՝ ըստ էության նպատակ ունենալով ապահովել ավելի կանխատեսելի միջավայր:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Լենա Հոբյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հեռ. 51-56-87
Էլ փոստ՝ lena.hobyan@gov.am